



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

N 438 - Ա


08 մայիսի 2019 թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ
ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՂՈՎԻ N 1
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգ»-ի 9-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջները **որոշում եմ՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության և ներմարզային երթուղիների հատկացման մարզային մրցույթային հանձնաժողովի 2019 թվականի մայիսի 6-ի N 1 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

08.05.2019



**ՄԱՐԶՊԵՏ
Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

Մարզպետ Գ. Սանոսյան GNEL 1710830069

ք. Գավառ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2019թ. մայիսի 8-ի

N 438-Ձ որոշման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

**ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի Հայաստանի Հանրապետությունում
ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների
կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների
ընտրության մարզային մրցութային հանձնաժողովի**

06 մայիսի 2019թ.

ք. Գավառ

2019 թվականի մայիսի 6-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում
ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների
կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի մարզային մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի

նախագահ՝
անդամներ՝

Ա. Ղազարյան
Ա. Զոհրաբյան
Գ. Խաչատրյան
Կ. Բաղդասարյան
Լ. Գևորգյան

Օրակարգում

Ներմարզային Գավառ(Ա/Կ)-Գեղարքունիք-Գավառ N 1 միկրոավտոբուսային
երթուղու սպասարկման ժամկետները երկարաձգելու մասին:

Քննարկվեց

2019 թվականի մայիսի 12-ին լրանում է Գավառ(Ա/Կ)-Գեղարքունիք - Գավառ
N 1 միկրոավտոբուսային երթուղու սպասարկման ժամկետը: Անհրաժեշտությունից
ելնելով առաջարկվում է ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001 թվականի
օգոստոսի 16-ի ՀՀ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման
ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն
իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը
հաստատելու մասին>> թիվ 762 որոշման 62-րդ կետի պահանջներով, մինչև նոր
մրցույթի անցկացումն ու արդյունքների ամփոփումը լիազորել ՀՀ Գավառտրանս>>
ՍՊ ընկերությանը ժամանակավորապես իրականացնել Գավառ(Ա/Կ)-
Գեղարքունիք-Գավառ N1 միկրոավտոբուսային երթուղու սպասարկումը՝ նախկին
մրցույթով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած
տրանսպորտային միջոցներով:

Հանձնաժողովի որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման 62-րդ կետի պահանջները՝ մինչև նոր մրցույթի անցկացումն ու արդյունքների ամփոփումը լիազորել «Գավառտրանս» ՍՊ ընկերությանը ժամանակավորապես իրականացնել Գավառ(Ա/Կ)-Գեղարքունիք-Գավառ N1 միկրոավտոբուսային երթուղու սպասարկումը՝ նախկին մրցույթով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած տրանսպորտային միջոցներով:


2. ՀՀ Գեղարքունիքի մարզպետի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

Մրցութային հանձնաժողովի
Նախագահ՝



Ա. Ղազարյան

Անդամներ՝



Ա. Զոհրաբյան



Կ. Բաղդասարյան



Լ. Գևորգյան

Քարտուղար՝



Գ. Խաչատրյան